զիրն զՏէլի Հիւսէին փաշան որ ԺԴ տարի պահէր զկղզին Կրիտու և ի քրիստոնէից Ֆռանկաց բազում աւանս առնէր, զեկեղեցիս քակէր, զերկիրն աւար հարկանէր և զերի վարէր և զամենայն սպասք եկեղեցեաց ի ծախս հանէին, ամենայն զօրք նաև մեծամեծք իւրեանց ի սպասու ունէին. և անդ չինէր մըզկիթս և կարգէր իմամս՝ բազմացուցեալ զթուրքս։ Եւ ինքն յաղթող ի պատերազմի բազում անգամ ի մահուանէ ազատէր եւ քաջութիւն նորա յամենայն երկիր հռչակէր։ Նստէր անդ՝ հայէր, մնայր, ջանայր զի զամենայն բերդս կղզոյն առնէր և բռվանդակ իւրեանց լիցի։ Վէզիրն առաքէ զիր թէ Ղափուտան ես, ել և ե՛կ. պատրաստեա՛ զքեզ զի երթիցես։ Եւ նա ել վաղվաղակի ուղիղ սրտիւ և ուրախ մտօք ի տուն վէզիրի, երկիրպագանէր նմա, և նա սամսուրս մուշտակս մատուցանէր նմա, յոր սովորն են։ Եւ առաքեաց թաղլիսճի առ թագաւորն ասել զգալուստ Հուսէինին. և նա կոչեաց և նա զլաթեաց։ Եւ մտեալ վէզիրն առ թագաւորն ասէ. Ահա՛ օր է ընդունելի։ Եւ զի յառաջագոյն ծանուցեալ էր նմա և ասացեալ[1]) թէ Այսքան ամ է որ զերկիրն ունի և ինքն հարստացեալ, և քեզ զի՞նչ առաքեաց յամենայնէ. ո՞ւր է համար, ո՞ւր մուհասէպէ. զքեզ փոքրութեան համարին, և այլ բազում։ Կամեցաւ վէզիրն յԷրբէնէ սպանանել զնա, բայց մինչ Հուսէինն անդ եկն, վէզիրն ի Մաճար էր որ Եանովայ ասի։ Եւ Հիւսէինն ասէ առ թագաւորն զամենայն արարք իւր վասն շահի իւրեանց. և արքայն ասէ. Զի՞նչ բերեալ ես յերկրէն ինձ։ Եւ ասէ Տէլին. Բազում ճէվահիրս ունիմ, և հանեալ ամանով զատամունս իւր ցուցանէ նմա։ Եւ ասէ թագաւորն. Զի՞նչ քաջութիւնս արարեալ ես. և նա

1) անցեալ.